

**ՎԱՐՂԱՆ ԱՐԵՎԵԼՑՈՒ «ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ»
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սուրբ Վարդան Արևելցին հայ մեկնաբանական գրականության կարկառուն ներկայացուցիչներից է: Հայ մատենագրության մեջ նա հիշատակվում է որպես «Հոգիապայծառ եւ տիեզերալոյս վարդապետ», «Հոգիապայծառ սուրբ», «Մեծն Վարդան» անուններով: Գրիգոր Տաթևացին իր Երգ Երգոցի (այսուհետև՝ Երգ) մեկնության մեջ Երգի Վ. Արևելցու մեկնությունը հիշատակում է այսպես. «Ի լուսաւոր բանիցն վարդապետին Վարդանայ»¹:

Վարդան Արևելցու այս մեկնությունը ձեռագիր վիճակում է և ունի բազմաթիվ գրչագիր օրինակներ: Միայն Մաշտոցյան մատենադարանում պահպանվում են Վ. Արևելցու մեկնության 38 ձեռագիր օրինակներ: Հնագույն ձեռագիրը ՄՍ. թիվ 5452 օրինակն է, որը գրվել է Խորանաշատում. Կիրակոս Գանձակեցին և Վ. Արևելցին այստեղ են կրթություն ստացել²: Այն ունի հետևյալ վերնագիրը. «Հաւաքումն ի մեկնչացն Վարդան վարդապետին Երգ Երգոցին»³: Վարդան Արևելցու մեկնության խորագիրը գրչագրերում հիշատակվում է ինչպես «Պարզութիւն յերգս Երգոյն» վերնագրով, այնպես էլ «Հաւաքումն ի մեկնչացն Վարդան վարդապետին Երգ Երգոցին»⁴, «Հոգիապայծառ Սուրբ հաւրն, լուսաւոր Վարդան վարդապետի արարեալ համառտ մեկնութիւն Երգոյ երգոցն պարզ եւ դիւրահաս՝ ի խնդրոյ վարդապետի Կիրակոսի»⁵, «Վարդանայ վարդապետի արարեալ վասն Երգ Երգոյն Սողոմոնի մեկնութեան»⁶, «Հոգիապայծառ սուրբ հաւրն Վարդանայ լուսաւոր արարեալ համառաւտ մեկնութիւն Երգոյ երգոյն»⁷: Երգի Արևելցու մեկնությունը համեմետաբար քիչ է ուսումնասիրված, եղած ուսումնասիրություններն էլ հեղինակի երկերի շարքում են քննում այս մեկնությունը⁸:

Երգի Վ. Արևելցու մեկնության առաջաբանը հրատարակել է Համազասպ Ոսկյանը «Յովհաննէս վանական եւ իւր դպրոցը» աշխատության մեջ⁹, հեղինակի կյանքն ու գործը քննել է Փ. Անթապյանն իր երկհատոր «Վարդան Արևելցի» մենագրության մեջ¹⁰: Այլ անդրադարձներ վերաբերվում են հիմնականում ուրիշ մեկնությունների հետ (Նյուսացու, Նարեկացու, Որոզինեսի, Հիպոդիտո-



սի¹¹) Երգի Վ. Արևելցու մեկնության առնչությամբ: Հայագիտության մեջ առկա են Վ. Արևելցի- մեկնիչին տրված ընդհանուր գնահատականներ¹²:

Ա. Արևելցու մեկնության կառուցվածքը- Դեռևս Վ. Արևելցուց առաջ հայ մեկնաբանական գրականության մեջ ձևավորված Երգի մեկնության հարուստ ավանդույթը¹³ հնարավորություն էր ստեղծում համակարգելու Երգի առկա մեկնությունները, ինչը և ձեռնարկեց Վ. Արևելցին: Այս իմաստով նրա մեկնությունը Երգի մեկնությունների մեջ նորություն էր: Այն խմբագիր- մեկնություն է: Այդպիսի մեկնությունները կոչվում են նաև օղակաձև կամ ծաղկաքաղ, որոնց առավելությունն այն է, որ պատկերացում են տալիս միաժամանակ մի քանի մեկնությունների վարաբերյալ. քաղվածքների միջոցով հնարավոր է դառնում պարզել մեկնիչի գրական նախասիրությունները, քաղվածքներ անելու եղանակները, գրական կապերը, ժամանակի ընթացքում պատկեր-խորհրդանիշի զարգացումը և նրա իմաստային փոփոխությունները: Օղակաձև մեկնությունները չէին կարող միայն հեղինակի գրական նախասիրության արդյունք լինել: Նրանք ունեին նաև գործնական նպատակ¹⁴: Հայտնի է, որ մեկնությունները դասագրքեր էին և Վ. Արևելցի մանկավարժին հավանաբար մտահոգել է Երգի ամբողջական մեկնության ձեռնարկ ունենալու խնդիրը¹⁵:

Ծաղկաքաղ մեկնություններն ունեն մի թերություն. հեղինակային միջամտությունների հնարավորությունները սահմանափակ են: Ուսումնասիրությունը սակայն ցույց է տալիս, որ Վ. Արևելցին չի սահմանափակվել միայն խմբագրելով բառի ուղիղ նշանակությամբ: Նա ազատ է վարվել հղվող բնագրերի հետ: Հաճախ էլ արդեն հայտնի մեկնությունները հարստացրել է իր իսկ մեկնաբանություններով:

Վ. Արևելցին հարազատ է մեկնական գրականության մեջ լայնորեն կիրառվող եղանակին. Երգ երգոցի ընդարձակ բնաբան- քաղվածքը դնում է մեկնողական հատվածի սկզբում, ապա մեկնում մասնատելով այն ավելի փոքր հատվածների¹⁶:

Վ. Արևելցու մեկնությունը Երգի նախորդ մեկնություններից տարբերվում է նրանով, որ լուսանցքում ունի հեղինականիշ հղումներ «Նյուսացի» անվան համար «Գր.», «Որոգիներս»-ի համար՝ «Որ.», «Նարեկացու» համար՝ «Նար.»: Մեկնությունն ունի նաև «Հիպոդիտոս» անվան հղումը՝ «Հիպ.» ձևով, սակայն ուշադրության արժանի է այն փաստը, որ Վ. Արևելցին Հիպոդիտոսի անունը իր

գործածած աղբյուրների շարքում չի հիշատակում: Այս անունն ի սկզբանե հասկացվել է որպես «Եպիփան Կիպրացի», սակայն հետագայում այն ճշտվել է¹⁷:

Մեկնությունն ունի մեկեմասին՝ Կիրակոս Գանձակեցուն ուղղված ընծայական և հիշատակարան՝ երկի գրության տեղի և ժամանակի հիշատակությամբ:

Ընծայականը- Վ. Արևելցու Մեկնության ընծայականը կարևորվում է հետևյալ պատճառներով. ա) Հեղինակը տեղեկություններ է հաղորդում Մեկնության խնդրատուի վերաբերյալ. բ) Վ. Արևելցին անուն առ անուն թվարկում է օգտագործած աղբյուրները:

Ընծայականն սկսվում է ավետարանական խոսքով. *«Նման է արքայութիւն երկնից գամծի ծածկելոյ յագարակի»*¹⁸: Նման քաղվածքով սկսելն իհարկե պատահականություն չէր: Այս քաղվածքն արդեն իսկ ակնարկ է երգ երգոցի մեկնության այլաբանական եղանակի վերաբերյալ: Այն ամպով և վարագույրով է ծածկված «պարզամիտների», «ախտավոր մտքեր» ունեցողների վատատեսությունից. *«Իբր այս գիրք ի պարզամտաց եւ ախտաւոր մտաց ամբով և վարագուրաւ ծածկեալ ի բլշակնութենէ (-վատատեսություն) նոցա»* (1բ):

Հեղինակն ակնածանքով է խոսում աշխատության պատվիրատուի՝ Կիրակոս Գանձակեցու մասին, որի հետ Վ. Արևելցին մտերիմ էր և նրա խնդրանքով էլ գրել է այս մեկնությունը: Կ. Գանձակեցուն դիմում է այսպես. *«հարազատ մեր եղբայր Կիրակոս ըստունեաց պետ: ...Քում ըղձիցն կցորդել հրամայեցեր ի բան և ի գիր շատս»* (1ա):

Այնուհետև հեղինակը խոսում է իր օգտագործած աղբյուրների մասին: Ինչպես ընդունված էր միջնադարյան գրական երկերում, հեղինակը սահմանափակվում է՝ նշելով միայն այն հեղինակի անունը, որի երկից քաղվածքներ է արել: Այդպես է վարվել Նարեկացին՝ Գ. Նյուսացու անունը հիշատակելով, այդպես է վարվում նաև Վ. Արևելցին՝ հիշատակելով նախ՝ Գ. Նյուսացու, ապա Որոգինեսի և Գ. Նարեկացու անունները. *«... զմնացեալն յերգոյ երգոյն ի Գրիգորէ Նիւսացոյ, որ մեծն է աղբիւր եկեղեցւոյ լնուլ առաջնորութեամբ եւրիգինես (իմա՛ Որոգինես), համառօտ առեալ և Գրիգորին ի սկզբանէ»* (1ա):

Մեկնության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վ. Արևելցին աղբյուրները հիշատակել է այնպիսի հերթականությամբ, ինչպես ինքը օգտագործել է դրանք: Այսպես՝ սկզբից նշված է Գ. Նյուսացու անունը. հեղինակի մեկնությունը հիմնված է գերազանցապես այս մեկնիչի մեկնության վրա

(հասկանալի է՝ Գ. Նյուսացու մեկնած համապատասխան հատվածի շրջանակներում): Եվ Գ. Նյուսացու անվան հեղինականիչ հղումները միշտ առանց բացառության առաջինն են: Որպես կանոն, Գ. Նյուսացուց հետո հիշատակում է Որոզինեսի անունը:

«*Չամառօտ առեալ և գորհգորին*» արտահայտությունը ցույց է տալիս, որ մեկնիչը համեմատաբար քիչ տեղ է տվել Գ. Նարեկացու մեկնության քաղվածքներին: Վ. Արևելցին Գ. Նարեկացու առնչությամբ հիշատակում է միայն «Գրիգոր» անունը: Երգի հեղինակի մեկնության գրչագրերից մեկն ունի «Գրիգոր Նարեկացի» հիշատակությունը¹⁹: Ինչպես նշվեց, «Հիպոդիտոս» անվան հիշատակություն չկա Մեկնության ընծայականում, այնինչ բուն մեկնության մեջ առկա են նաև քաղվածքներ Երգի Հիպոդիտոսի մեկնությունից: Հիշատակի արժանի է այն հանգամանքը, որ Արևելցու Մեկնության հնագույն օրինակներից մեկը²⁰ (1283թ.) այդ հավելումները չունի: Այդ է պատճառը, որ Մ. Արամյանը եզրակացնում է. «Հիպոդիտոսի անունով մեզ հասած հայերեն մեկնութիւնը, ըստ երեւոյթին, ինչ-որ հայ հեղինակի խորհրդածութիւններ են հիպոդիտոսեան մեկնութիւնների վրայ: Նորից այդ հեղինակը թեաբար Ներսես Լամբրոնացին է, որի մասին ակնարկում է հմբ. 4066 ձեռագրում առկա Հիպոդիտոսի մեկնութեան յիշատակարանը. «Ես՝ բազմամեղ հոգի Կոստանդին, գրի գրեալ յոյժ գեղեցիկ սրբոյ հաւրն մերոյ տեառն Ներսիսի Տարսունի եպիսկոպոսի եւ ի միջոյն ի վեր իւր իսկ մեկնեալ...»²¹ (349թ):

Այնուհետև Վ. Արևելցին անցնում է Երգին վերաբերվող տեսական հարցերի քննությանը: Մի ակնարկից երևում է, որ Վ. Արևելցին ծանոթ է նաև Գ. Նյուսացու Մեկնության պատճառներին: Նա գրում է. «*Բաւական համարիմք զնախադրելն ի նմանէ պատճառ և պատասխան ի մարմնական և ախտաւոր կարծողացն*»²² (1թ): Արդ, ի՞նչ է Երգ երգօցը և ի՞նչ խորհուրդ ունի: Գ. Նյուսացու նմանությամբ Վ. Արևելցին խոսում է Սողոմոն իմաստունի մասին և ակնարկում, թե նա գրել է երեք գիրք՝ տարբեր տարիքների համար. *«Առանք առաջին գիրքն, որով ընդ մանգունս խաւսի՝ ասելով . «Լուր որդեակ, խրատս հաւր քո և մի՛ մերժէր զաւրէնս մաւր քո և ստացի՛ր զիմաստութիւն: Երկրորդ գրովքն, որ կոչի ժողովող ընդ երիտասարդ հասակս խաւսի՝ ասելով... «Ուրախ լեր երիտասարդ ի մանկութենէդ քո...: Իսկ երրորդ գրովքս (իմա՝ Երգ երգօց) խաւսի ընդ ծերունական հասակս»*²³ (2ա):

Յիշատակառանդ- Արևելցու մեկնությունն ունի հիշատակարան մեկնության թվականի, տեղի, հիշատակությամբ: Յիշատակարանից երևում է, որ այն գրվել է Չաղպատում, 1265թ.-ին²⁴: Այստեղ Վ. Արևելցին հիշատակվում է որպես «տիեզերալոյս եւ իմաստուն վարդապետ»:

«Ի թվին յեաթն հարիւրերորդի չորեքտասաներորդի (1265) եղեւ մեկնութիւն Երզոյ երզոցս ի Վարդանայ գիտնականէ տիեզերելոյս եւ յիմաստուն վարդապետէ յաստուածամերձ սուրբ ուխտիս Յաղբատայ, ընր հովանեաւ Սուրբ Նշանիս փրկութեան մերոյ արեգականս եւ հօր եւ հաւաքողի սրբութեանս մերոյ, ի պատրիարգութեան Չայոց տեառն Կոստանդեայ եւ Չեթումոյ պսակաւորին մերոյ եւ յարհի եպիսկոպոսութեան տեառն Յովանիսի, զորս ի կամս իւր խնամեացէ եւ ի սէրն մածուսցէ Յիսուս Քրիստոս Աստուած մեր բանն փեսայացեալ եւ հարսնազգեցեալ, ամէն»²⁵:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վ. Արևելցին առանձնահատուկ մոտեցում ունի Երզնի բնագրի նկատմամբ: Քաղվածքային մեկնությամբ Վ. Արևելցին պարզել է մի իրողություն՝ Երզնի բնաբան- քաղվածքները միօրինակ ձևով չեն գործածվում տարբեր մեկնությունների մեջ: Իր մեկնության մեջ բավականին հանգամանորեն անդրադառնում է Երզնի երզոցի բնագրային տարրերը մերցումներին:

Եռօ երզոցի բնաբանային քաղվածքներ- Չայունի է աստվածաշնչյան մեկնությունների առանձնակի կարևորությունը միջնադարյան գրականության մեջ: Եվ ոչ բոլոր ուսյալ մարդիկ ունեին Սուրբ Գիրքը մեկնելու իրավունք: Չայ մեկնիչներն անպայմանորեն պիտի ունենային վարդապետական աստիճան, բարձրակարգ գիտելիքներ: Սակայն բարձրագույն կրթությունն ու խոր գիտելիքները բավական չէին մեկնություն հեղինակելու համար: Նախքան աստվածաշնչյան երկը մեկնելը մեկնիչը պետք է որոշակի աշխատանք տաներ՝ ծշտելու համար ձեռքի տակ եղած բնագիրը, ընտրել ամենաստույգ ընթերցումը, որի հիման վրա էլ իրականացներ մեկնությունը²⁶: Մեկնության հեղինակումը բազում թելերով կապվում է նախընթաց մեկնությունների հետ, դրանց նկատմամբ որոշակի վերաբերմունքի առկայության հետ: Վ. Արևելցին առանձնահատուկ վերաբերմունք ունի աստվածաշնչյան տեքստի նկատմամբ: Եվ Սուրբ գիրքն օգտագործելու իր եղանակով նա տարբերվում է նախորդ մեկնիչներից (Գ. Նյուսացի, Գ. Նարեկացի): Նկատելի է, որ Երզնի թե՛ թարգմանական և թե՛ ինքնագիր մեկնությունների ուսումնասիրության ժամա-

նակ ի հայտ են գալիս Երզնի բնագրի այլասացություններ: Բնականաբար, հեղինակային միջամտությունների մասին խոսք լինել չի կարող, քանի որ աստվածաշնչյան մեկնություններում սուրբգրյան հատվածը սովորաբար մեջբերվել է ուղիղ ձևով: Հետաքրքիր է, որ Վ. Արևելցին իր մեկնության մեջ անդրադարձել է ոչ միայն Երզնի բնագրային տարընթերցումներին, այլ նաև դրանց տարբեր մեկնություններին: Երզնի ոչ մի այլ մեկնիչ այսպիսի մոտեցում Երզնի բնաբանային հատվածների նկատմամբ չունի: Եվ Արևելցու մեկնության արժանիքների մեջ պիտի դիտարկել նաև այն առանձնահատկությունը, որ նրա մեկնության մեջ ամբողջականորեն արտահայտվում են ոչ միայն իրենից առաջ առկա Երզնի մեկնությունները, դրանց տարբերություններն ու իմաստային նրբերանգները, այլ նաև Երզնի բնաբանային տարբերակները, որոնք Վ. Արևելցու բնագրում ի հայտ են գալիս երկու կերպ. ա). Հեղինակն ընտրում է քաղվածքի մի տարբերակը, իսկ մյուս տարբերակն արտահայտում է մեկնության մեջ. բ) Հեղինակը «միջամտում է» քաղվածքին:

Դիտարկենք օրինակներ.

1. Անտես արար- խեթի հայեցալ²⁷.

ՍՏՏՈՒԾԱՇՈՒՆԸ ²⁸	ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ	ՆՅՈՒՄԱՑԻ
Մի՛ հայիք յիս, զի ես եմ սեւացեալ, <u>Ձի անտես արար զիս</u> ²⁹ արեգակն(Ա. 5).	Մի՛ հայիք յիս, զի ես եմ սեւացեալ, <u>զի անտես արար զիս</u> արեգակն (6բ):	Մի՛ հայիք ընդ իս, զի ես սեւացեալ թխացալ, <u>քանզի խեթի հայեցալ</u> ընդ իս արեգակն ³⁰ :

Ուշագրավ է, որ այս երկու տարբերակներն էլ առկա են Վ. Արևելցու մեկնության մեջ:

Երգ երգոցի բնաբանը՝

ԱՐԵՎԵԼՑԻ- *«Ձի անտես արար զիս արեգակն, որ է թոյլ տալն զնալ ի պատրանս աւծին, եթէ արեգակն զԱստուած իմանաս: Իսկ թէ ըստ միւս թարգմանին «խեթի հայեցալ» ասելոյ՝ զաստանայ է ասել»:*

2. Խանդակաթ-խոցոտեալ.

ՍՏՏՈՒԾԱՇՈՒՆԸ	ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ	ՆՅՈՒՄԱՑԻ
Ձի <u>խանդակաթ</u> եմ ես սիրով (Բ. 5) ³¹ .	Ձի <u>խանդակաթ</u> եմ ես սիրով (16ա).	Ձի <u>խոցոտեալ</u> սիրով եմ ես (67ա) ³² :

ԱՐԵՎԵԼՑԻ- «Եւ դարձեալ «խանդակաթ»... Խանդ, որ է նախանձ սիրոյ փեսային կաթեաց յիս: Կամ «խոռոտեալ սիրով եմ ես». որ է քաղցր, վեր և պարծելի» (16բ):

3. Սրտակաթ արարէր- սրտացուցեր.

ՍՍՏՈՒՄԾԱՇՈՒՆԸ	ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ	ՆՅՈՒՄԱՅԻ
Սրտակաթ արատեղ զմեզ (Դ. 9):	Սրտակաթ արատեղ միով ակամբ քո (31բ):	Սրտազուգեղ զմեզ, քոր հմ հառսն (92բ) ³³ :

ԱՐԵՎԵԼՑԻ- «Յոգիացուցեր կամ սրտակաթ արատեղ, սիրտ ի մեզ եղէր... դարձեալ սրտազուգեղ միով ակամբող» (32ա):

4. Պատուհան- ծակ.

ՍՍՏՈՒՄԾԱՇՈՒՆԸ	ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻ	ՆՅՈՒՄԱՅԻ
Եղբարորդին իմ ձգեաց զձեռն իւր ընդ պատուհանն (Ե. 4).	Եղբարորդին իմ ձգեաց զձեռն իւր ընդ <u>պատուհանն</u> (37ա).	Եղբարորդին իմ յիւրեաց զձեռն իւր ընդ ծակն (108բ):

ԱՐԵՎԵԼՑԻ- «Եղբարորդին իմ յիւրեաց զձեռն իւր ընդ պատու և հանն (պատուհան բառն այսպես է հասկացել): Կամ ընդ ծակ մի, որ է աչք տեսող երեւելի գոյիս» (37ա):

բ). Վ. Արևելցին օգտագործում է Աստվածաշնչյան բնագրի տարընթերցումներն արտահայտելու ոչ այնքան ընդունված եղանակ. նա «միջամտում» է աստվածաշնչյան քաղվածքին:

Այդ կարգի ուշադրության արժանի մի օրինակ կա Արևելցու մեկնության մեջ: Դա աստվածաշնչյան «Պատգամաւորութիւն քո դրախտ նոնենեաց...» (Դ. 13) հատվածն է: Գ. Նյուսացու, համապատասխանաբար նաև Գ. Նարեկացու մեկնություններում առկա է «Առաքումն քո դրախտ նոնենեաց...»³⁴ տարբերակը: Ահա թե ինչպես է վարվել Վ. Արևելցին այս հատվածի հետ. «Առաքումն քո դրախտ նոնենեաց կամ պատգամաւորութիւն քո համդերձ նարդրսի...» (33բ): Փաստորեն, հեղինակը Երգի միևնույն բնաբանի երկու տարբերակներն էլ արտահայտել է միևնույն քաղվածքում, այլ ոչ թե առանձին: Այնուհետև Վ. Արևելցին առանձին- առանձին մեկնում է «առաքում» և «պատգամավորություն» բառերը:

Մի այլ դեպքում էլ Վ. Արևելցու մեկնության մեջ Երգի բնաբանային քաղվածքի տարբերակներից մեկով մեկնության է ենթարկվում բնաբան-քաղվածքի մյուս տարբերակը.

Գահոյք- մահիճ

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆԶ	ՎՈՐՂԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ	ՆՅՈՒՍԱՅԻ
Առ <u>գահույ</u> մեր հովանաւոր (Ա. 15):	Առ <u>գահույ</u> մեր հովանաւոր (14ա) ³⁵ :	Առ <u>ճահիճն</u> մեր հովանաւոր (62ա):

ԱՐԵՎԵԼՅԻ- «Առ գահույ մեր, որ է ճահիճն ցուցար հովանաւոր, որ է բնութիւնս մեր»(14ա):

Այսպիսով՝ ներկայացրած օրինակները ցույց են տալիս Վ. Արևելցու առանձնահատուկ վերաբերմունքը խնդրո առարկա բնագրի վերաբերյալ: Ոչ մի այլ մեկնության մեջ Երզ երզոցի բնագրային քաղվածքների նկատմամբ այսպիսի վերաբերմունք չենք տեսնում: Սա անկասկած առավելություն էր նախորդ մեկնությունների նկատմամբ:

Կարևորելու համար Երզի բնագրանային քաղվածքների նկատմամբ Վարդան Արևելցու այսպիսի մոտեցումը, բավական է նշել այն, որ հեղինակի այս մեկնության մեջ առկա դիտարկումները լայնորեն կիրառել է Համազասպ Ոսկյանը Երզի քննական բնագիրը կազմելիս³⁶:

- ¹ Տե՛ս Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) ձեռ. հմբ. 1200: Ամբողջական վերնագիրն է «Համառօտ հաւաքումն ի տեսութիւն լուծմանց Երզոյ երզոյն աշխատասիրեալ Գրիգորիոս հսկողի, արի եւ երջանիկ հռետորի եւ քաջ փիլիսոփայի հայոց, աշակերտի եռամեծիմ Յոհաննու Որոտնեցոյ, ի լուսաւոր բանիցն վարդապետիմ *Վարդանայ*» (այսուհետև՝ Տաթևացի, Մեկնութիւն), 367ա- 395բ:
- ² Տե՛ս Գ. Ոսկեան, Յովհաննես Վանական եւ իւր դպրոցը, Վիեննա, 1922, էջ 7-13:
- ³ Տե՛ս ՄՄ. ձեռ. հմբ. 5452, այսուհետև՝ Արևելցի, Մեկնութիւն, իսկ մեջբերված քաղվածքների էջահամարները՝ քաղվածքի կողքին՝ փակագծերի մեջ, թղ. 1ա:
- ⁴ ՄՄ. ձեռ. հմբ. 4834: Տե՛ս Գ. Ոսկյան, Երզ երզոցի առաջին եւ երկրորդ թարգմանությունները, Վիեննա, 1924, էջ 41: Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Կազմեց Գ. Յակովբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ 207:
- ⁵ Չեռ. հմբ. 5259, թղ. 6ա; հմբ. 2603, թղ. 295ա; 3213, թղ. 1ա:
- ⁶ ՄՄ. ձեռ. հմբ. 1156, թղ. 143ա; հմբ. 8215, թղ. 1ա:
- ⁷ ՄՄ. ձեռ. հմբ. 1121, թղ. 198ա:
- ⁸ Գ. Զարբխանայան, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 730-747 «Վարդան Արևելցի», էջ 742-743՝ Մեկնութիւն Երզոց Երզոյն: Կ. վրդ. Քիպարյան, Պատմութիւն հայ հին գրականութեան, Վենետիկ 1992, էջ 474 Վարդան Արևելցու կյանքը, էջ 475՝ Մեկնությունները:
- ⁹ Տե՛ս Գ. Ոսկյան, Յովհաննես վանական եւ իւր դպրոցը, «Կիրակոս Գանձակեցի», էջ 97-100: Կենսագրությունը՝ էջ 37-53, Գրությունները՝ էջ 53-91, Երզի Վարդան Արևելցու մեկնության մասին՝ էջ 63-64:
- ¹⁰ Փ. Անթայան, Վարդան Արևելցի, հ. Ա, Երևան, 1987, Երզի Արևելցու մեկնությունը՝ էջ 138, և հ. Բ, Երևան, 1989:
- ¹¹ Տե՛ս Կ. Մուրադյան, Գրիգոր Նյուսացիին հայ մատենագրության մէջ. «Յաղագս Երզոյ երզոցի» մեկնությունը եւ Վարդան Արևելցիին», Երևան, 1993, էջ 175: Նյուսացու, Որոգիմեսի, Նարեկացու եւ Արևելցու մեկնությունների առնչությունները տես Գ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց..., էջ 207- 210: Ա. Արամյան, Երզ երզոց համդերձ մեկնութեամբ նախնեաց, էջ 15- 16:
- ¹² Ղ. Ալիշան, Հայապատում, հ. Ա., Վենետիկ, 1901, էջ 88:

- ¹³ Հայտնի էին ինչպես երգի թարգմանական (Հիպոդիտոս Բուտրացու, Որոզհնեսի, Նյուսացու), այնպես էլ ինքնագիր (Նարեկացու և Լամբրոնացու) մեկնություններ:
- ¹⁴ Փ. Անթափյան, Վարդան Արևելցի, հ. Ա., էջ 30:
- ¹⁵ Վարդան Արևելցու մեկնությունները գերազանցապես խմբագրական բնույթի են՝ տե՛ս Փ. Անթափյան, Վարդան Արևելցի, հ. Ա., «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի», «Մեկնութիւն Եզեկիելի», «Մեկնութիւն Հնգամատենիցն», էջ 130-138:
- ¹⁶ Մեկնության այս ձևը մասամբ օգտագործվել է Հիպոդիտոսի և Որոզհնեսի կողմից, իսկ Նյուսացու մեկնության մեջ դարձել է օրինաչափ:
- ¹⁷ Տե՛ս Գ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց..., Նրա նկարագրած գրչագիրը վերջնամասում ունի մեկնիչների անունների ցանկ, էջ 210 «Երգ երգոց գրքոյս մեկնողք են այտոքիկ, որ ի լուսացըն գծագրուած է. Գր.= Գրիգոր Նիսացիին: Հիպ.= Եպիփան Կիպրացիին, Որ.= Որոզհնես: Նար.= Գրիգոր Նարեկացի, Վար.= Վարդան մեծն:
- ¹⁸ Մաթ. ԺԳ. 44:
- ¹⁹ ՄԱ. ձեռ. հմր. 6720. «Զմնացեալն յերգոյ երգոցն ի Գրիգորի Նիսացոյ, որ մեծն է աղբիւր եկեղեցոյ լնուլ առաջնորդութեամբ Որոզհնես, համառօտիլ և զայլս սակաւ ինչ ի դիել ի Գրիգորէ Նարեկացոյ» (89ա):
- ²⁰ ՄԱ. ձեռ. հմր. 4066, «Հոգիապայծառ սուրբ հաւրն Վարդանայ լուսաւոր վարդապետի արարեալ համառատ մեկնութիւն Երգոյ երգոցն պարզ եւ դիւրահաս», (193ա-218բ):
- ²¹ Տե՛ս Մ. Արամյան, Երգ երգոց համդերձ մեկնութեամբ նախնեաց, էջ 15:
- ²² Երգի Նյուսացու մեկնության պատճառը ՄԱ. ձեռ. հմր. 1897, թղ 110ա-112բ:
- ²³ Հմմտ. ՄԱ. ձեռ. հմր. 1013, Գրիգորի եպիսկոպոսի Նիսացոյ Թուղթ յաղագս Երգոյ երգոց (այսուհետև՝ Նիսացի, Թուղթ). «Քանզի առական վարդապետութիւն առ տակաւին տղայս առնէ զբանն պատշաճաբար հասակին զխրատուն յարմարեցուցանելով. «Լու՛ր, ասէ, որդեան՛կ, աւրինաց հաւր քո եւ մի՛ մերժէր ախրատս մար քո» (43ա):
- ²⁴ Փ. Անթափյանը այս մեկնության թվականը համարում է 1255: Տե՛ս Փ. Անթափյան, Վարդան Արևելցի, հ. Ա., էջ 138-139:
- ²⁵ Տե՛ս Արևելցի, Մեկնութիւն, թղ. 65ա-բ:
- ²⁶ Encyclopedic Dictionary of the Bible, Louis F. Hartman, New-York, Toronto, London, 1963, p.1070.
- ²⁷ Նախապես ներկայացրել ենք բնաբանային տարբերակները (անտես արար-խեթի հայեցաւ), դրանք ցույց ենք նաև Աստվածաճշի, Արևելցու, Նյուսացու և Նարեկացու մեկնությունների օրինակներով, ապա՝ այդ տարբերակների արտացոլումը Արևելցու բնագրում:
- ²⁸ Տե՛ս, Աստուածաշունչ, Վիեննա, 1924:
- ²⁹ Տե՛ս Գ. Ոսկյան, Երգ երգոցի առաջին և երկրորդ թարգմանությունները, ծան. 5, էջ 44:
- ³⁰ Նյուսացի, «խեթի», Մեկնութիւն թղ. 49բ: Նարեկացի, «խեթի», Մեկնութիւն, էջ 282:
- ³¹ Նարեկացի՝ «խանդակաթ են սիրով», տե՛ս Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք (այսուհետև՝ Նարեկացի, Մեկնութիւն), Վիեննա, 1840, էջ 282:
- ³² Նյուսացու Մեկնության այս հատվածը միևնույն մեկնության մեջ տարընթերցումներ ունի. «զի վիրաւորեալ սիրով են աս», Նյուսացի, Մեկնութիւն, թղ. 61բ:
- ³³ Հմմտ. Նարեկացի, Մեկնութիւն՝ «Սրտացուցեր զմեզ քոյր մեր հարսն», էջ 306:
- ³⁴ Տե՛ս Նիսացի, Մեկնութիւն, թղ. 94ա, 97ա. նաև Նարեկացի, Մեկնութիւն, էջ 308:
- ³⁵ Հմմտ. Նարեկացի, Մեկնութիւն՝ «Առ գառիոյ մեր հովանաւորք», էջ 287:
- ³⁶ Գ. Ոսկյան, Երգ երգոցի առաջին և երկրորդ թարգմանությունները, էջ 42-76: